

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սարեկակ վեցամսեայ	7 "
Արսասահմանի համար սարեկակ	15 ֆր.
վեցամսեայ	8 "
Ավերիկայի համար սարեկակ	3 ռ.
վեցամսեայ	1.50 "

Ծանուցումն տղր և ուղղին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է: Երեքին և երկուսն ընդամենը համար 20 0/0 զեղը կրնայ:

Վառեայի համար ձեռքի 10 սանթիմ է

# ՉԱՐՄԱՐԻ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՈՒՆ. ԲԱՆԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՉՈՐԵՔԵՄԱՐԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Համակ եւ դրամ  
դրկել խմբագրութեանս  
հասցիին

Редакция на вѣстникъ  
"Шаржумъ"  
Варна

Redaction du journal  
"Charjoum"  
Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար  
ձեռքի  
15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար  
ձեռքի  
20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չեմ  
տրուիր

ՉԱՐՄԱՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԷ

Café Promenade  
Vienne

Այս շքեղ սրճարանը կը գտնուի Վիեննայի Թրանց Ժօսէֆ քարափին վրայ: Կըստանայ զանազան հայերէն թերթեր: Առհասարակ բոլոր հայ կամ արեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն: Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին գիմել հոս ուր պիտի գտնեն իրենց յարմար գիւրուածիւնները և անհրաժեշտ տեղեկութիւնները:

ՆԱՄԱԿ ՊԱՐԻՉԻՑ

Բարիկ, 18 դեկտ.

Պարտութեամբ կազմուցի Պ. Մ. նիկի թղթակցութիւնը որի մէջ նա Լօրիսի և Չէրպուի միջև տեղի ունեցած ընդհարումի պատճառը որոշելու համար, Չէրպուի յօդուածի այն պարբերութիւնն է գնում միայն որով Լօրիսը հըռչակում է իբրև տաճկահայերի կացութեանը անտեղեկ մարդ:

Իրօք շատ ծիծաղելի կը լինէր եթէ այդպիսի մի որակումի պատճառով Լօրիսը իրան թոյլ տար Չէրպուի ներողութիւնով կամ մենամարտումով գոհացում պահանջել:

Բարեբախտաբար իրողութիւնը այլ կերպ է, Լօրիսը վերաւոր վելու և այդ վերաւորանքի համար գոհացում պահանջելու կատարեալ իրաւունք ունէր:

Ուրիշ խնդիր թէ գոհացում պահանջելու ձեւը խիստ և հայ բարքերին յարմար չէ!!! Սակայն չը պէտք է մոռանայ որ Լօրիսը գոհացումը առաջ պահանջել է ներողութիւնով Չէրպուի կողմից: Չէրպուի եթէ իր գործած սխալը ճանաչէր, մենամարտի խնդիրը ինքստինքեան ջուրն կընկնէր: Ասացինք թէ Չէրպուի յօդուածը իրօք վերաւորական է և շատ մեր ասածը հաստատելու համար զնում ենք վերաւորական կտորի

ամբողջ թարգմանութիւնը: «1878ի պատգամաւորութիւնը իր իսկական արժէքով գնահատելու համար բաւական է միայն որ մեր հայրենակիցները զայն համեմատեն մօտերս տեղի ունեցած կաթողիկոսական պատերազմութեան հետ, որը զէջ կազմված և անժամանակ ուղարկված լինելով՝ գրեթէ կատարեալ անյաջողութեան մատնվեց:»

Այլապէս և կլատեան արժանի չէին մի խրիմեանի կամ Լոսինեանի կօշիկների կպերը արձակելու, իսկ աշխարհական պատերազմը մի տաճկահայ գործերին քիչ թանօթ ուսածայ թծրչկ էր: Այս պատերազմները նախարար Դէլկաստէին ներկայանալու համար իրենց առաջնորդ ընտրեցին Պ. Վ. Բէրարին, իսկ նախագահ Ռօզվէլտին ներկայանալու համար պի Ռէյնօլտին ինչպէս հօթենթօթների և զուլունների պատերազմները, որոնք քաղաքակրթված ազգերի նախարարութիւնների առջև դեղերելու համար Սերպայցի կամ Ամերիկացի ուղեցոյցներ են ընտրում: Սրանք քաջութիւնը անգամ շունեցան զնալու Գերմանիա, Աւստրո-Ունգարիա և Իտալիա, ու լքեցին իրենց տրված յանձնարարութիւնը, որի արգիւնքը զրօյով վերջացաւ: Պատրիարքական պատերազմութիւնը այցեցելց բոլոր պետութիւններին, բանակցեց առանց թարգմանիչների և օտարազգի միջնորդների, ձեռք բերեց Բեռլինի 61րդ յօդուածը՝ միակ հիմքը հայկական պահանջներին:»

Այս կտորի բովանդակութիւնը և միտքը այս է. Լօրիսը իր բոլոր ընկերների հետ համեմատվում է վայրենի ցեղերի անպիտակից ներկայացուցիչների հետ, որոնք ոչխարի անգիտակցութեամբ հետեւում են իրենց եւրոպացի առաջնորդներին: Երկրորդ իրթէ Լօրիսը և իր ընկերները վախկոտութեամբ լքում են իրենց յանձնուած գործը: մինչ-

գեւ պատուիրակութիւնը իր գործը կիսատ է թողել միայն կաթողիկոսի կարգադրութեամբ, որի պատճառների մասին այժմ խօսել անգաղտնապահութիւն և անտաքտութիւն կը լինէր:

Չէրպուի անձը բարձրացնելու համար և միայն այդ մտքով ու ոգով զեկավարված, առանց ուշք դարձնելու 78ի և ներկայի պայմանների տարբերութեան վրա ներկայ պատերազմութեան անյաջողութիւնը բացատրել է ճգնում միայն և միայն պատուիրակների վայրենութեամբ, տգիտութեամբ և անգիտակցութեամբ: Եւ միթէ սա վերաւորական չէ: Չկան արիւն պէտք է ունենալ չը վերաւորվելու այս պիսի վերաւորանքից:

Ասում են թէ Չէրպուի այնպէս, միամտութեամբ համեմատութիւն է արել: Սխալ է այդ և բոլորովին սխալ Ամբողջ յօդուածը կըրում է ինքզինքը հայոց ազգի յաւիտենական պատգամաւոր կարծողի վերաւորված եսի ոգին, ու նա արտայայտված է միայն Լօրիսին ու իր ընկերներին վերաւորելու համար, իսկ ամէն մի վերաւորանք հասցնող մարդ միշտ պատրաստ պէտք է լինի քաջաբար ընդունելու և հակահարածները վերաւորվածի կողմից, ինչ ձեւով էլ որ լինեն նրանք: Իսկ դիտող մարդկանց մնում է ճշգրել միայն իրողութիւնները և ոչ թէ վիճաբանութեան մէջ մտնել հակահարածների ձեռքի ու չարիքների մասին: Ամեն անհատ իր նկարագրի և հայեացքի համեմատ որոշում է հարեւածել զինքը անտեղի վերաւորողին:

ՎԱՐՂՈ

ԳԳՐՈՒԹՅԱՆ ԳՐՈՒՈՂԸ ԵՒ Ա. Շ. Խ. Ա. Տ. Ա. Ն. Բ

Բոլ Տոււէր, Ֆրանսայի երեսփոխանաց ժողովին նախագահը գիրք մը պիտի հրատարակէ «Տղոց գիրքը» անունով, ուրկէ «Մարէն» հատուած մը հրատարակած է: Գրագիր

ներու և առհասարակ գործի մարդոց խորհրդածութեան կը յանձնենք ասիկա, որ ժամանակակից կեանքի յղացումը կը պատկերացնէ իր մէջ Պէտք է նկատի ունենալ որ հեղինակը պարզ աշխարհութեան միջուկ երեսփոխանական ժողովին նախագահութեան բարձրացած է, եւ յառաջիկայ ընտրութեանց ատեն, հաւանականութիւն կայ որ հանրապետութեան նախագահ ինք ըլլայ: Ինչ որ Տոււէր կըսէ Ֆրանսացիներուն, ճշմարտութիւն է ամէն ազգի համար, նոյնպէս մեզի համար:

Գործել կը նշանակէ ապրել: Մտածելու ու կամենալը բան մը չի պիտի արժէին, եթէ գործելու չի ծառայէին:

Չրաղումը, գործունէութիւնն ու աշխատանքը մարդուն բարոյական ու ֆիզիքական հաւասարակշռութեան համար անհրաժեշտ են, իր գոյութեան էական պայմաններն են անոնք: Նաեւ անոնք հիմքն են մարդկային ընկերութեան գոյութեան:

Ֆրանսան, աւելի քան երբէք, պէտք ունի որ իր զաւակները գործի մարդիկ ըլլան:

Ոսքի մարդ շատ ունի ան: Մտքսան տարի առաջ մեր նախահարց պերճախօսութիւնը կը զովէին: Եւ պարտութեան օրերուն էր որ ան կընդունէր այս հեղինական յարգանքը: Կեսար կը ջարդէր եւ կամ իր յաղթական սայլին ետեւէն կը քաշէր արիւնյուայ գալիթցի ճարտասանները: Լաւ ճանցին, շատ ճանցին, բայց Գալլիան նուաճուեցաւ:

Բարեբախտաբար մեր ցեղը իր երկար ու փառաւոր պատմութեան ընթացքին մէջ, ցոյց տուած է որ գիտէ նոյնքան կորովով գործել, եւ գուցէ աւելի լաւ քան ոչ ուրիշ մէկ ազգ, երկու հազար արուան աշխատանք, պայքար ու փառք կանգնած են ասիկա ապացուցանելու համար: Ու դեռ երէկ, 18րդ դարու վերջերը եւ 19րդի սկիզբները կարելի է տեսնել թէ ինչ կորովի տէր ենք մենք, եւ թէ ինչքոր կրնանք ընել հայրենիքի ազատութեան, անկախութեան եւ մեծութեան համար:

Պէտք է որ այսօր վերստանանք գործելու կամեցողութեան զգացումը: Ֆրանսայի ապագան, նոյն իսկ իր կեանքը ասկէ կախում ունի:

Յարատեւ, կորովի աշխատութիւն պէտք է գոյութեան անխուսափելի կոռուին մէջ յաջողութիւն ձեռք բերելու համար, օգտակար հանդիսա-

նալու համար աշխարհին, հոն ուր ճակատագիրը յատկացուցած է մարդուն: Ապրած միջավայրի մէջ քու կենքդ գործունէ համար պէտք է որ գործես առանց յոգնութեան, առանց երբէք վհատելու:

Գործունէութիւնը մեյ մտքի ու սրտի կարողութիւնները կը մարդէնանեւ, անոնց առողջութիւնը կապահովէ: Գործունէութիւնը շարժում է, եւ հետեւաբար կեանքը:

Անգործութիւնը, անփութութիւնը անշարժութիւն է, եւ հետեւաբար՝ մահ:

Ուստի, ահա՛ ինչ որ պիտի ըսէի հոս իմ խորհուրդներուս ունկնդրող երիտասարդ ընթերցողին:

—Գիտցիր գործել, գործի մարդ եղիր:

Եւ պիտի աւելցնէի.

—Գործունէայ եղիր եւ աշխատաւէր: Կեանքիդ լաւագոյն մասը աշխատութեան տուր:

Բայց ամէն գործունէութիւն աշխատանք չէ:

Աշխատանքը արդիւնաւոր ու մեթոտիք գործունէութեան կըսուի, անոր՝ որ կըստեղծէ, կը փոփոխէ, կամ մէկ խօսքով՝ որ կարտադրէ: Աշխատանքը մարդկային նախնական ու յաւերժական օրէնքն է: Մարդը կը մեծցնէ ու կազմուցնէ ան: Անհուն մեծամասնութեան մը համար անիկա անհրաժեշտութիւն մըն է. շատերու համար ալ՝ պարտականութիւն մը:

Ակնարկ մը նետէ մարդկութեան ընթացքին վրայ, եւ պիտի տեսնես որ աշխատանքը իր գոյութեան պայմանը եւ իր յառաջիմութեան գործիքը եղած է: Գաղափարները իրենք եւ Նորոգայի քաղաքակրթիչ ուժը մարդկային աշխատանքի ծնունդներն են:

«Աշխատանքը ազատութիւն է» կըսէ ժողովրդական երգ մը:

Իրապէս, աշխատանքը անկախութիւն մը կապահովէ մարդուն, կեանքի արժանաւորութիւն մը, ուրկէ զուրկ է անգործ մարդը:

Անժամանակ մարդուն համար բացարձակ անհրաժեշտութիւն մըն է աշխատանքը. նիւթական ու օրինաւոր պարտաւորութիւն մը:

Ինչ է աշխատող մարդուն դերը աշխարհի վրայ, ինչ օգտակարութիւն ունի ան իր երկրին եւ մարդկութեան համար. պարապ տեղը պիտի փնտնէք:

Հարուստը կարելիութիւն ունի եւ պարտաւոր է անըստէն շատ եւ լաւ աշխատելու, որովհետեւ աւելի լաւ միջոցներ ունի: Ապրելու համար իր աշխատութեան արդիւնքին պէտք չունենալը, ինքնին պարտք կը դնէ անոր՝ վրայ անշահախնդիր եւ ընդհանրութեան օգտակար աշխատութեանց նուիրուելու:

Աշխատանքը առաքինութեանց մայրն է:

Պարապ մարդը, ոչ միայն անօգուտ է այլ եւ անպէտ մարդկութեան եւ ինքզինքին: Աշխատողը ամէն առտու չերթար օդաչափը նախելու, դիտելու թէ երկրինքը ինչ վիճակի մէջ է, կամ հայելին անջնակզուին գոյնը քննելու: Կը գործէ, կը շարժի եւ կըսպասէ ըստ արտաձէտ սերմերը որոնք իր մարնոյն կամ մտքին կըսպասանան:

Պարապ մարդը կըսկսի իրար անց-

նիլ ամենադոյզն զժուարու թեան մը պահուն, որ իր աչքին խոշոր կերեւեայ. ասկէ յոռաջ կուգայ տխրութիւնը, յոռի արամազրութիւնը, մեծախտը վերջապէս որ ֆիզիքապէս ալ կը հիւանդացնէ ենթական:

Ասիկայ յոռաջ կուգայ մանուանդ երբ մարդ իր հայրենիքէն դուրս տեղ մը կապրի. ամէն բան հոն թշնամի կը տեսնէ իրեն. արեգակը, միջնորտն ու հողը իր կենդանիներով ու միջատներով որոնք կը վերստանան:

Շատեր ընկճուած՝ ինքզինքնին կը յանձնեն ընտելեան քանդիչ ու ուժեղութիւն: Հիւանդութիւնն ու մահը կը հնձէ զիրենք:

Անոնք որ կարճամարտ են անպատ պայմանները, կաշխատին, գործունէութիւն յոյս կուտան. աւելի լաւ կը պաշտպանեն ինքզինքնին այդ օտարութեան մէջ, անպատիժ կանցնին վտանգներու ընդմէջէն եւ կը պահպանեն իրենց առողջութիւնն ու կեանքը:

Թող առեւք ուրեմն որ միշտ կրկնեմ ձեր ականջին.

—Աշխատեցէք, աշխատեցէք անդադար՝ չըրէք պարապ ու անգործ մի կենաք:

ԲՈՒ ՏՈՒՄ

### ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՂԵՆ. ԱԿՍՆ. ԱՐԱՐԻՒՆ  
ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ

—○—

ԸՂԴՀ. ԴԱՏԱԽԱՅԻՆ ՃՍՒՇ  
—○—

(Մանզումէի-Էֆեբարուն քաղաւած)

(Շար. Անխ. Բիւնէ)

Իր երկրէն կանչուած և Քրիօքըր օթէլին սպասաւորներէն Պիթլիսցի Ծրօ Պաղտոյան մասնակցած է Հայոց նախկին դէպքերուն ալ. ու այս առթիւ 10 տարի շրջապատի արտաքինութեան դատապարտուած, սակայն յետոյ կայս. ներման արժանացած է: Ծրօ զարձալ, Թորգոմի և սրճարար Նշանի առաջնորդութեամբ, Դրօշակ ընկերութեան մէջ մտած է: Այդ միջոցին Թորգոմի կողմէ սրճարար Նշանի տրուած 12 պոմպազ և հրանիթ պարունակող մեծ ծրար մը Նշանի հետ պահած է Քրիօքըր պանդոկին նկուղին մէջ, սանդուխին տակ, Յետոյ Թորգոմի կողմէ պահանջուելով՝ հրանիթ պարունակող նիւթերը տնոր վերադարձուած են: Իսկ պոմպազները հոն մնացած ըլլալով, եղեռնական արարքէն երեք ամիս առաջ, Թորգոմի ազդարարութեան վրայ, այդ պոմպազները՝ Նշանի կողմէ հանելու ձեռնարկուած է, սակայն օթէլին տիրոջ կողմէ սանդուխին վրայ շատ մը շիշեր գրուած ըլլալուն համար անկարելի եղած է այդ ձեռնարկը: Ամբաստանեալ խոստովանած է այս իրողութիւնները:

Նկատելով որ յիշեալ Ծրօ Հայոց Դէպքին մասնակցող անիծապարտ անձերէն է ու քրիմինալ մէջ նոյնքան կարեւոր դերք մը ունեցած է որքան սրճարար Նշան, և Թորգոմ զայն քրիմինալ այդ կարգի գործառնութեանց կը գործածէր Քրիօքըր Մարմինը այս մասին ալ հարկ դատեց քննութիւնները ալ աւելի առաջ տանիլ: Այսպէս, Ծրօ խոստ-

վանեցաւ թէ Հայոց դէպքին խառնակցող և միասին խոռվարարական ձեռնարկներու մէջ գտնուող Սիմոն անուն անձը այն ատեն Պօլսէն վառնա փախած, յետոյ իր ծննդավայրը գտնուող Պիթլիսի կուսակալութեան Ախլաթ գաւառակը գացած է ու մինչեւ երեք տարի տարի առաջ հոն բնակած ու մեծած է Թորգոմի կողմէ այդ անձին տրուած էր շատ մեծ «պոմպազ» մը, իսկ անոր հետ բաղդատմամբ փոքր «պոմպազ» մը՝ Սէրբէլ Կ'Օրիան անուն Քրիստիան մէջ պայթեցնելու համար: Այդ Քրիստիան ծառաներէն Պիթլիսցի ամբաստանեալ Մանուկի եւ միւս Մանուկի, Պօղոսի և Պաշիկի կողմէ փոխադրուած են այս «պոմպազ»ները եւ այն ատեն պայթեցնել անկարելի եղած ըլլալով նոյն Քրիստիան մէջ պահուած են եւ յիշեալ անձերն ալ այդ պոմպազներու փոխադրութեան եւ քրիստիան մէջ անոնց պահուելուն մասնակից եղած են, իբր Քոմիթէին անդամ:

Քննութեանց շնորհիւ երեւան եկած յեղափոխական գործողութեանց այս մասին եւս մեծ կարեւորութիւն տրուեցաւ հետազոտութեանց ատեն: Մէկ կողմէ՝ քրիստիան մէջ ծառայող և իրենց վրայ կասկած հրաւիրող անձերը կանչուելով հարցաքննութեան ենթարկուեցան եւ միւս կողմէ քրիստիան մէջ պահուած պոմպազները երեւան հանելով ակներեւ յիշատի մը առաջը առնելու ձեռնարկուեցաւ փոթով Հարցաքննութեանց եւ խուզարկութեանց հետեւեալով երեւան ելաւ թէ այդ անձերը Հայոց դէպքին ատեն եւ անկէ ետք ալ քրիմինալ պատկանող անիծապարտ անձերէն ըլլալով ծառայութիւններ կատարած են. արդարեւ, Թորգոմի կողմէ, պայթեցնելու համար, Սիմոնի յանձնուած են երկու «պոմպազ»ներ գործ կարելի չէ եղած պայթեցնել ու եւ է կերպով. յետոյ յատկապէս բաժնակիր մը մէջ զրուած են անիծապարտները մէջ պահած են, Իրաւոր զորք գրուած ջանքերուն շնորհիւ, 50 քիլօ ծանրութեամբ փշտիկաւոր խիստ մեծ «պոմպազ» մը և ուրիշ փոքր «պոմպազ» մը, մոմլաթի եւ բամպակի մէջ զգուշութեամբ պահուած, յիշեալ տեղերէն երեւան հանուեցան: Բացայայտ կերպով ստուգուեցաւ թէ այդ շարագործները Քրիստիան մէջ ատեն մը ծառայելով պատահութեամբ շահած են, որով յիշեալ «պոմպազ»ները յաջողած են փոխադրել և դիւրութեամբ պահել հոն, որ շատ մը յարգելի անձնաւորութեանց գումարման վայրն է: Այդ պոմպազները թէեւ չեն պայթեցուած սակայն պէտք եղած ատեն և քրիմինալները հրամանին համաձայն պայթեցնելու համար՝ յատկապէս մոմլաթի մէջ փաթկած են, անոնց գորաւոր ազդեցութիւնը չկորսնցնելու նպատակաւ:

Հասկնալու համար թէ յիշուած Սիմոնը իր ծննդավայրին՝ Ախլաթի մէջ բնակած եւ իրօք մեծած է, քննութեան ձեռնարկուելով, Պիթլիսի կուսակալութեան գրուեցաւ այս մասին. Հասած հետազոտական պատասխանէն հաստատուեցաւ թէ Սիմոն մեծած է Ախլաթի մէջ:

Վերը մանրամասնօրէն պատմեցի իզմիրի մէջ կատարուած հետապնդութեանց և քննութեանց արդիւնքը, որ Աթէնքի օսմ. գործակատարութեան միջոցով ծանուցուեցաւ նաեւ Հելլէն կառավարութեան նոյն կա-

ռավարութիւնն ալ գոն մնաց յեղափոխականներու նուաճումով և խայտառակուելով մարդկային ընդհանուր ապահովութեան պահպանման մասին այս բարեսիրական զեկոյցէն և ինք ալ Աթէնքի և Պիթլիսի մէջ խիստ քննութեան և խուզարկութեան մը ձեռնարկեց: Այսպէս, երեւան հանեց թէ Հայ յեղափոխականները գէպի Պօլսի և օսմ երկրները կարգ մը խոռվարարական առաքուներ կատարելու համար, Պիթլիսի մէջ ալ մասնաճիւղ մը հաստատուեւ եւ քանդիչ հրանիթեր, գործիքներ ու պայթեցնիկ զեղեր բերել կուտային: Թէ՛ նոյն քանդիչ գործիքները գրաւուեցան և թէ իրենք մէկիկ մէկիկ ձերբակալուեցան եւ յանձնուեցան դատարան: Այս առթիւ, Հելլէն կառավարութեան ձեռք ձգած թուղթերուն եւ նամակներուն մէջ Տօքթօր Խօմաթօ Արդարեան ստորագրութեամբ եւ Յուլիս 27 թուականի Նամակի մը մէջ հետեւեալ հաստատուած կար Յաջողուած է գոյքերը ապահով տեղ մը յանձնուել: Բայց կարծես չոր բաղդ մը արգելք կը հանդիսանայ մեր բոլոր կաղապարպութիւններուն դէմ եւ մեր բոլոր ձեռնարկները ապարդիւն կը մնան: Գտնուեցաւ նաեւ ժընէվի Հայ յեղափոխական ընկերութեան կնիքով, 1905 եւ յուլիան Յուլիս 25 թուականի եւ Քրիստիան անունին ուղղուած նամակ մը, որուն լուսանցքին վրայ գրուած էր. Սաֆօ եւ Բուպիւնա ողջամբ ելան եւ հոս կը գտնուին: Պաշտօնական տեղեկութիւններէ հասուցուեցաւ որ այս նամակներուն մէջ յիշատակուած գոյքը, եղեռնական արարքին օրը գործածուած հրանիթն է որուն մնացած մասը չէր գտնուած. իսկ Քրիստիան ալ բուն իսկ Ֆիլիպէի բնակիչներէն եղող Սիլվիօ Բիչիի խաղական անունն էր. Գննութեամբ հասկցուեցաւ նաեւ որ նոյն Սիլվիօ Բիչիի դէպքն որ մը առաջ Պիթլիսի փախած է եւ նոյն պահուն հոն հասնող ժընէվի յեղափոխական ընկերութեան ստորագրութեամբ վերոյիշեալ նամակը կը պատկանէր Սիլվիօ Բիչիի որ ամէն գործողութիւններու եւ ընթացքներու մասին տեղեկութիւն կանխէր: Ամբաստանեալ Ժորիս ալ յայտնեց թէ Սօֆօ անունը Լիբա Բիքի անունն է ընկերութեան մօտ. որով հաստատուեցաւ որ ժընէվի ընկերութիւնը այդ նամակով կը ծանուցանէր դէպքին օրը Պօլսէն քացայ գտնուող Սիլվիօ Բիչիի թէ Սաֆօ, այսինքն Լիբա Բիքի եւ Բուպիւնա, այսինքն Բուպիւնա Ֆայն, յայտնուած են Պօլսէն փախչիլու ողջամբ մասնակի ձեռնուլաւ:

Այս պաշտօնական տեղեկութեան վրայ նկատի առնուեցաւ որ մնացորդ մէլիթիները ուր պահած կըրնայ ըլլալ Սիլվիօ Բիչիի, որ Վիեննա համար ապահով տեղ մը կը նկատուէր: Լուսուած ըլլալով որ այդ անիծեալ Սիլվիօ Բիչիին Բերա. Նիշանէ պահակաւորներն մօտ, Աւստրիական հիւանդանոցին մօտերը տուե մը կերթար, քննութիւն մը բացուեցաւ, երեւան հանելու համար նաեւ թէ յիշեալը դեռ որոնց հետ յարաբերութեան մտած եւ մէլիթիները ինչպէս եւ ո՞ր տեղուանքը յաջողած է պահել, Այսպէս կանչուեցաւ եւ հարցաքննուեցաւ հելլէնականապետ Մարի Բուքուս անուն կինը, որ Սիլվիօ Բիչիի հետ ունեցած իր սիրային յարաբերութեան բերմամբ կը կարծուէր թէ կարգ մը պարագաներու

տեղեակ է, եւ որուն անունն ալ յիշատակած էր Ժորիս իր խոստովանութեան մէջ :

Մարի Բասթալ խոստովանեցաւ Սիւլվիո Րիչիի հետ ունեցած յարաբերութիւնները՝ քանի որ յիշեալը ասան մը իր մօրաբորջը տունը բնակած էր եւ ինք ալ հոն գտնուելով մտերմացած էին : Մարի յայտնեց թէ որ մը անտաւ որ Սիւլվիո Րիչի իր մահճակալին տակ կը գետեզէր բերանը լայն եւ յատակը նեղկակ : խաղողի կողովի ձեւով կողովիկ մը դադանօրէն գան քննեց եւ հասկցաւ որ մէջը կար 15 հատի չափ փշտիլաւոր պիւպա : ասոնց վնասակար բաներ ըլլալը գիտնալով անմիջապէս ազդարարեց Սիւլվիոյ որ տունէն այլուր փոխադրէ զանոնք : ան ալ անմիջապէս զանոնք իր թեղեայ տուփերու մէջ զետեղելով տունէն դուրս հանեց : որ մը գարձեալ քոնեաքի սընտուկի ձեւով, մէկը մեծ ու մէկը պղտիկ երկու սնուկ բերաւ, որոնց մէջը կարգ մը ծրարներ կային : Սիւլվիո ասոնց համար ալ յայտնեց թէ աւստրիական հիւանդանոցին յանձնուելու համար իբր յանձնակատար բերել տուած միջատասպան փոշի են : ինք ասոր հաւատաց եւ Սիւլվիոյ զեկոյցին վրայ զանոնք երկու սնուկ մէջ տարաւ յանձնեց աւստրիական հիւանդանոցին մէջ հայազգի դոնապանի մը որուն ձեւը բացատրած էր իրեն Րիչի :

(Շարունակելի)

ԿԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ԱՐՁԱԴԱՆՉ

ՄԵՐ ՀՐԱՊԱՐԱԿ

ԳԱՆՈՒՆ ՇՍՐԺԱՍԻԹՐ

Յօդուած Ա.

Մեր այս արարմունքով մենք ենք գործը սիրողները, մենք ենք կուսակցութեան նախանձախնայի բողոչները, թէ մեր այն ընկերները որոնք եղած բոլոր շարիքները տեսնելով լռեցին ու համակերպեցան շարիքի գոյութիւն ունենալուն մեր շարքերուն մէջ : Որովհետեւ զի մեր նախապարտը մերը, թէ մեր այն ընկերներուն որոնք զեռ մինչեւ երէկ մեզ հետ բոլորովին համակարծիք էին ու յետոյ վախերէն յետ քաշուեցան ըսելով թէ «ճանրմ ինչերնուս պէտք է, ինչ կրնանք ընել :

Գ Ր Ե Յ

ՕԳՏԱԿ ՄԻՒՊՕ

ՀԱՅՐ ԲԱՆՖԻԼ

(Թարգմանուած ֆրանսերէնէ)

Չգտաւ, այն ատեն քակեց իր գօտին, անցուց մարմինին շուրջը, ինչպէս պատասաններ մոմիայի մը : Այս պէս բռնելով, սկսաւ գայն քաշել մեղմօրէն, զգուշութեամբ, խուսափելով շատ բուռն բաղոյսի մտերմութեան : Եւ յանկարծական ոտուկներէ հողին անհարթութեան վրայ ձանձերը զայն կը հայածէին իրենց խլացուցիչ թրուիչքով, և սանգար, փայտացած սրունքին ծայրը կը թրթորար : Արարողութիւնը երկար չտեսց, Ժիւլ գիւղը ինչոց փոսին մէջ, չոր

... Ոչ մենք այլ կարծիքէն չենք եթէ չի կրնանք ալ մեր ձայնը լսել ընել ալ, եթէ չի կրնանք չարիքը մէջտեղէն վերցնել, դարձեալ մեր յեղափոխական սրբազան պարտականութիւնն է բողոքել, խօսիլ, որովհետեւ մենք երգում էինք սուած ճշմարտին օգտակարին, եւ ոչ թէ սուտին, վնասակարին ու մեր հայրենիքի ազատագրութեան սուրբ գործին վնասողներուն : Մեր այս արդարացի քայլն է արարքէն յետոյ թէ կան մարդիկ, ընկերներ որոնք մեզ իրենց կարծիքով անգիտակիցներ կանուանեն կամ զանազան անպատուաբեր անուններով կոչեն մեզ սեպնել, մենք այդ տեսակներուն կը սենք որ իրենք շատ կը սխալին, անգիտակիցները իրենք են որ չարիքը անսնալէն յետոյ կը համակերպին : Մեր այս ընկերներէն շատերը որոնք մեզ այսօր անգիտակիցներ կը կոչեն, իրենք չէին որ դաշնակցական Ամերիկայի պատգամաւորական ժողովին մէջ գործիչ—պատգամաւորի օձիքէն բռնել էին եւ անկէ բացատրութիւն կը պահանջէին : այդ տեսակ վարմունքի տէր չեղան Ամերիկայի Կ. Կոմիտէի անդամները, որոնց տրուած պատասխանը եղաւ : «Գուցէ հակայն զանգիտակիցներ էք : Ասկէ աւելի բացատրութիւն տրուեցաւ իրենց, որ հիմակ ալ Ձաքարիայի պապանձուէն են առեր ու մեզ ալ անգիտակիցներ կը կոչեն : Ինչու վախճան, ինչու ետ քաշուեցան, չէ որ իրենք էին ամենալիսաւոր բողոքողները, հիմակ իրենք են եւր Գաշնակցութեան անսխալ գործերու քարոզողները, բայց իրենք չէին այսօրուայ անսխալ համարած գործերը երեկ գատապարտողները : Իրենք որ հետեւողական չի մնացին երեկուան իրենց ըսածներուն եւ ըրածներուն, եւ ոչ թէ մենք, Կ. Կոմիտէի անդամներէն : Տ. Տ. Չէ՛ր որ իր պահանջներուն պատասխան չըստանալով քիչ մնաց որ հակայնգիտակցական պիտի դառնար եւ սակայն այսօր, իր բոլոր պահանջներուն գոհացում ստացած ըլլալը կը յայտնէ : Արեւմտեան նահանգներուն մէջ ճատաքելութեան պաշտօն մը՝ առնելէն յետոյ... Այժմ հարցնե՞ք թէ ո՞վ է անգիտակիցը եւ գործին վնասողը մենք թէ Ձ. Տ. եւ իրեն նմանները :

Մենք մեր ըսածներուն հաւատարիմ մնալով եւ միանգամայն կուսակ-

հողով լեցուց մինչեւ գետնին երեսը : Երբոր լինեցաւ՝

— Այս բանը պարտական էի քեզի ըրաւ, քաղցր աշխարհակալ աստղերու, միամիտ հիւսող մշուշներու... Կնացիր և երազէ... հիմայ երազը անպիստան է... ոչ ոք քեզ պիտի արթնցնէ... Երջանիկ ես :

Առաւ բրիչը, զարդարեց մորենիի պտակով մը, և կոթը՝ գերեզմանին մէջ խոթելով տնկեց խաչի մը պէս : Յետոյ ձգեց ինքզինքը հողին վրայ գրեթէ նուազած :

Բայց յեղակարծ ընդգրում մը իսկոյն ոտքի հանեց զինքը, բերանը կծկուած, նայուածքը դաժան : Եւ մինչդեռ իր ակնարկը կերթար քառակուսի հողին, որուն խորը Հայր Բանֆիլ կը հանգչիր, դէպի եկեղեցիին յատկացուած գետնը որ մորենիին բով ցանցուած էր եւ փոշիով ծածկուած, խորհեցաւ՝

— Ան է եկեր իտէալը... Սէրը...

սակցութեան ու գործին շահը աչքի առջեւ ունենալով առանձին շրջարեական նամակներով դիմեցինք մեր քոյր կօթիտէներուն եւ անոնց ուշադրութիւնը խնդրեցինք մեր վերոյիշած անպատեհութիւններու եւ չարիքներու մասին : Սակայն կեղծական կօմիտէն առանձին շրջարեականով թելադարած էր որ մեր գրածներուն նշանակութիւն չի տան : Եւ ատկէ յետոյ այլեւս մենք ինչ կրնայինք ընել եթէ ոչ հրապարակ քալ նոյն իսկ մեր խիղճը հանդարտեցնելու : Թէ անգիտակից ընկերներու, եւ թէ յեղափոխական սուրբ գործին հանդէպ : Բայց մենք մինչեւ ենք—մեզ նման հարիւրաւորներ կան որոնց կը թելադրենք փոխանակ լռելիայն ետ քաշուելու ուժ տան արդէն մեր սկզբած պայքարին : Ինչու համար թողունք որ մեզ արհամարհեն ու այդ կերպով արդարացնենք մեր խմբագիր—գործիչ—պատգամաւորի այն խոսքը թէ մենք խեղճ ու կրակ Գաւառացիներ ենք :

Այս ալ պէտք է ըսել որ եթէ կան ուրիշ կուսակցութիւններ, որ կուզեն մեր այս բռնած ընթացքը եւ բողոքը շահագործել մեզ իրենց կարգերուն մէջ հրախրելով՝ այդ տեսակները կը սխալին, որովհետեւ մենք դաշնակցականներ ենք ու կուզենք դաշնակցական ալ մնալ : Բողոքելը ըսել չէ թէ մենք ուրիշ հակառակորդ կուսակցութեան մը գիրք կը պիտի նետուինք :

Ինչ Դաշնակցականներ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Սիւլվիոյ տէրէն կը գրեն մեզի : «Յիմադոյ 18 կիրակի գիշեր Յակոբեան խումբը ինչպատ տեղւոյս վարժարանին աղքատ ուսանողներուն ներկայացում տուաւ : Հակառակ անպատու օգին «Օրիէնթալ» սրահը լեցուց էր հայ և օտար ներկաներով : Մեծ թիւ կը կազմէին մահճամատանները, որոնց մէջ տոմսակ ծախելու պրտած էր հայասէր Մէհմէտ Շահպազը որ շատ աջակցեցաւ մեր հոգաբարձութեան : «Թագականութիւնը եկեղեց-

ւոյն, հոգաբարձութիւնն ալ վարժարանաց համար մասնաւոր եռանդ ու սէր ցոյց կուտան : Վերջինս միշտ վարժարան կայացելէ և կանոնաւորապէս կը վերահարէ պայտօնեաներու թոշակները :

«Հանգէսին զուտ հասոյթը 400 ֆր. է : Սիւլվիոյ տէրի ամենէն ցայտուն առաւելութիւնն այն է որ «Ըսի քաւառ գոյութիւն շունի հոս : Կը մաղթենք որ հոգաբարձութեան շանքերը յարատեւ ըլլան և մենք ալ առիթ ունենանք արձանագրելու զանոնք «Շարժումի» մէջ :

— Բազկրատի մէջ կերպասեղենի խանութպան կլավեան անց, եալ շարժու առտու մը իր խանութին մէջ սպաննուած գտնուել է, գլխէն ընդունած կացինի երկու հարուածներով : Սպաննողը իրեն հայրենակից երիտասարդ մըն է եղբէր որ իր քով կտշխատէր : Այս վերջինը իր ոճրէն խելայեղ փողոցներու մէջ սկսեր է վազել քնա հայրս սպաննեցի՞ս պոռալով :

Ոստիկանները իբրեւ գիճով զայն բռնել են, բայց յետոյ խնդիրը երեւան ելեր և մարդասպանը ինք ևս իր ոճիրը խոստովանել է : Կըսեն թէ շարժառիթը դրամական խնդիր է :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՐԵ

1906 տարւոյ Յոնովար 1 ին այլեւս արժէք ունենալէ պիտի գադրին 5 և 50 արծաթ ֆրանքնոց ու 20 ոսկի ֆրանքնոց թղթադրամները, ասոր համար մինչև այս թուականը, պէտք է զանոնք անցեալ տարի պուլկարական Ազգային դրամատնէն շըրջաբերութեան հանուած թղթադրամներով փոխանակել :

— Բարիզէն քաշուած հեռագիր մը կը ծանուցանէ, նախկին

ուրիմն դատաւորը եւ քահանայ, այս երկու բարոյական հրէշութիւնները, զատաւորը որ կուզէ բնութեան հարկադրել չես գիտեր ինչ անիրականաբար դարութիւն մը, հերքուած բնագիտութեան ճակատագրականութենէն, քահանայ, չես գիտեր ինչ այլանդակ գթութիւն մը, ոճրին յախտնական օրէնքին առջեւ... Բնութիւնը, երազելը չէ... ապրիլն է... Եւ կեանքը սիրելը չէ... առնելն է... Իտէալը... Իտէալը... Իրաւունք ունէին այն խոշոր խոզերը (\*) զորս երէկ կը նախատէր... Եւ ես, անիրաւ էի :

Աբրահմ ուսերը թոթուեց : — Իտէալը, յարեց բարձրաձայն... կեցի՛ր, կեցի՛ր... պիտի ըսեմ իտէալին ինչ ըլլալը :

(\*) Ակնարկութիւն իր կղերական ընկերներուն :

(Շարունակելի)

պուլիարական կառավարութեան նախարարացեալ թոռորի վանչովի մահը. հանգուցեալը 51—52 տարեկան էր անոր դիակը պիտի փոխադրուի Սօֆիա:

— Ազգային երեսփոխանութիւնը որոշեց, տարի մը եւս շարունակել ուսմանական կառավարութեան հետ, նախկին վաճառականական պայմանագրութիւնը:

— Պուլիարիոյ և Սերպիոյ միջեւ կայացած վաճառականական պայմանագիրը, ծափահարութեամբ և յոտնկայս ընդունուած է Ազգային երեսփոխանութեան կողմանէ:

Այս պայմանագրութիւնը մեծ մտատանջութիւն կը պատճառէ Աւստրա—Հունգարական քաղաքական շրջանակներու մէջ: Նոյն իսկ կոմս Կոլուսովսքի, Սերպ կառավարութեան սպառնացած է խզել ամէն քաղաքական յարաբերութիւն, եթէ պայմանագրութիւնը չհրատարակուի:

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

#### Թ Ո Ւ Ր Գ Ի Ա

Բարիդ.— Պօլսէն հեռագրական «հաւաք» գործակալութեան կիմացնեն թէ՛ կարճատեւ առեւտրային խաղաղութենէ մը ետքը, ապստամբները եւէմէնի մէջ դարձեալ սկսած են իրենց գործունէութիւնը թրքական զօրքերու դէմ, այս վերջիններուս կացութիւնը քրիզի քական է:

— Պէրլին.— Պոլսէն կիմացնեն թէ՛ Բ. Դուռը սճապարանօք իր Սօֆիայի ներկայացուցիչը Պօլիս կանչած է, անկէ իմանալու համար պուլիարական կառավարութեան Մակեդոնիոյ սահմանագլխին վրայ տեսած զինուորական պատրաստութիւններու մանրամասնութիւնները և կարգադրութիւնները:

Արգէն ասկէ առաջ Սօֆիայի թրքական գործակատարը, այս մասին Պուլիարիոյ արտաքին գործոց նախարարէն քացատրութիւններ պահանջած էր, այս վերջինս անոր տուած էր գոհացուցիչ և խաղաղասիրական պատասխան:

— Պօլիս.— Ռուսական կառավարութեան պնդումի վրայ, Բ. Դուռը համաձայնած է, Պարսկութեան սահմանագլխին վրայ գտնուող չէզոք հողաբաժնէն իր զինուորները ետ քաշել:

— Պօլիս.— Ամերիկեան և Պելճիքական գեսպանները համաձայնած են, երկուքը միասին գիմել Բ. Դրան և պահանջել Աքրիկ Ունճեանը սպաննող վարդապետներն որուն ամերիկեան հպատակ ըլլալը հաստատուած է:

է, և անիշխանական Ժորիսի յանձնումը:

— Պօլիս.— Ասկէ առաջ հեռագրները հաղորդած էին թէ՛ Մակեդոնիոյ Տէմիր-Հիսար քաղաքի, պուլիարական թաղին մէջ, գտնուած են շատ մը ուժանակ, ուսմը և հրանիւթ: Հիմայ Բ. Դուռը պաշտօնապէս կը հերքէ այս լուրը, և կաւելցնէ թէ՛ անոնք նպատակաւոր տարածայնութիւններ են առանց ու է հիմի:

— Պօլիս.— Պէլճիքայի գործակատարը նոր հրահանգ ստացած է, իր կառավարութեան արտաքին գործոց նախարարէն, որոնց վրայ հիմնուելով հիմայ կը պատրաստէ նոր ծանուցագիր մը և կը պահանջէ Ժորիսի յանձնումը: Այս ծանուցագիրը երկուշաբթի օր Դրան պիտի տրուէր:

— Պօլիս.— Սուլթանը վճռած ըլլալով իր Ալպանացիներէ կազմուած պահակազօրքը ցրուել, և վախնալով, եթէ զանոնք խմբովին արձակելու ըլլայ անկարգութիւններ կրնան պատահիլ, որոշեց հարիւրական հոգիէ՛ բաշկացած խմբակներու վերածել պահակազօրք ու այնպէս զրկել Մակեդոնիայ:

Այս խմբակներէն մէկը երբ Սիրքէճի կը հասնի ցոյց մը կրնէ, որուն նպատակը տակաւին կարելի չէ եղած ճշգրել, պահակազօրէն մէն մին օդին մէջ հրացան արձակած է, այս սարսափելի իրարանցում մը պատճառած է:

#### Թ Ո Ւ Ս Ի Ա

Բեթերսպուրկ.— Մոսքովայի մէջ Անէրիանով զօրավարը ձերբակալուած է, որովհետեւ յեղափոխականներու հետ յարաբերութեան մէջ է եղեր:

Բեթերսպուրկ.— Իվանկարտ երկաթուղիի վրայ, Բատում կայարանի մօտ, թրէն մը կամուրջէ մը անցած պահուն ուժանակով յարձակում կրած է, Տեղաշարժը և իրեղէններու վակոնը ինկած են ջարդուփշուր եղած են: Երկու ճամբորդներու վակոններ սոսկալի զնառուած:

Իճքեան վարը մեռած է, ուղղեմատոյցը, 4 ուղղեւորներ և զինուոր մը ծանրապէս վիրաւորուած:

Նոյն պահուն 30 հոգիէ բաղկացած խմբակ մը յարձակած է Բատում կայարանի վրայ, կողոպտած է դրամակալը և շէնքը հրկիզած:

Այս գիծի վրայ եղած հաղորդակցութիւնները բոլորովին դադարած են:

— Պէրլին.— Բեթերսպուրկէն կիմացնեն թէ՛ Վլատիմիրովսքէն Ձէլեպպինսք հասնող պահեստի

զինուորները, միանալով յեղափոխականներու հետ ազատած են ձերբակալուած խոզվարարները և զօրանոցները հրկիզած: Տեղույն պահակազօրքը յեղափոխականներուն միացած է:

— Պէրլին.— Մոսքովայէն կիմացնեն թէ՛ անհամար զիւղներ տակաւին կը մնան փողոցներու մէջ: Բրոհորովի գործարանին մէջ աշխատող 400 գործաւորներ կառավարութեան անձնատուրքեղած են, 500 գործաւորներ ինքնին զինաթափ եղած են:

Անցեալ շաբաթ մասնաւոր հրահանգներու մէջ բժշկուելու համար 375 վիրաւոր ընդունուած են, 25 հաստ տղաքներ, 15 զինուոր և 7 ուստիկան:

Բացի ասկէց 174 մեռած և 885 վիրաւորներ կան շշանակուած, որոնցմէ 142 կին և 97 տղայ:

— Պէրլին.— Գազանի երկաթուղիին վրայ, Գոլոշինս կայարանին մօտ, զինուորական ատեանի արձակած վճռին համաձայն երկաթուղու ըմբոստ պաշտօնեաներէն 64 հոգի հրացանի բռնուած են:

Յունվար ամսոյ մէջ, Մոսքովայ զուժարուելու է Ձէմազովսքու համաժողովը, երկրագործական հարցը քննելու համար:

— Ուֆաի փոխ կառավարիչը սպաննուած է փողոցին մէջ:

Բեթերսպուրկ.— «Նարոտնա-բա—Սովպոտա» լրագիրը կըսէ թէ՛ Բուսիոյ անկումը տնտեսապէս անխուսափելի է: Կոստտարսովէնա պանդան իրմէ առնուած փոխանակագրերը չի կրնար վճարել:

— Նառավարութիւնը Գուրուբաթքիին արտօնած է Բուսիա վերադառնալ: Նա յայտարարած է թէ՛ Բետերսպուրկ վերադառնալուն պէս քաղաքական կեանքի պէտի նետուի:

— Բեթերսպուրկէն «Էշանժ թէլէկրաֆիդ» լրագրին կը հեռագրեն թէ՛ «Տուման» 19 փետրվարին, բերդարգելութեան գատապարտուածներու ազատութի տարեգարձին օրը պիտի գումարուի:

Վախ կայ թէ Յունվար 9ին անկարգութիւններ յարուցուելու փորձեր տեղի պիտի ունենան, կառավարութիւնը վճռած է ամեն զնով զսպել այս անկարգութիւնները:

— Բեթերսպուրկէն «Էգօ տը Բարի» լրագրին հաստատ ազբերէ կը հաղորդեն թէ՛ Ուլիարասի (Մարսկական հարց) համաժողովին համար նշանակուած ուսական պատգամաւորները, իրենց կառավարութեան հրահանգ ստացած են, ամէն յարուցուած խնդիրներու նկատմամբ, կորովի պաշտպանել զազդիական կառավարութեան պատգամաւոր-

ներու գործունէութիւնը: Ռուսական պատգամաւորներու պարագլուխը Մատրիտի գեսպան կոմս Գասինին պիտի ըլլալ:

— Կառավարական բոլոր հաստատութիւնները հրաման ստացած են, կարելի եղածին չափ շուտ պատրաստել պաշտօնեաներու ցանկը, որ իրաւունք ունին «Տուման» ընտրութիւններուն մասնակցիլ:

### Ն Ո Ր “ԳԵՂՈՒՆԻ”Ն ԼՈՍՏ ՏԵՍՍԱԻ

Նախորդներէն աւելի ճոխ պարունակութեամբ լոյս տեսած է Նոր «Գեղունին» կը պարունակէ 100էն աւելի գեղատիպ դասական պատկերներ, գերազանցօրէն յաջող է տպագրութիւնը, հիւնալի են քաղմագունի պատկերներն: Պատկերազարդ թերթէ մը թէեւ չի պահանջուիր գրական գնահատելի պարունակութիւն մը, սակայն խմբագրութիւնը «Գեղունին» այս բաժինին հարկ եղած շանյը խնայած չէ: Ներքին եւ արտաքին յոյուածագիրներ ունին հետաքրքրական գրուածներ:

Գինն է 10 ֆրանկ, 4 բուրլի, 2 տուար, Դիմել Խմբագրի Արմէնիէն Ս. Լազար Վիեննա (Իտալի)

1887 թ. ՏՄՐԻ 1906  
ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՅ  
Ուսումնական թերթ

Կը մտնէ իւր գոյութեան քսաներորդ տարեշրջանը, և կը շարունակուի իւր ծանօթ ուղղութեամբ և ծրագրով: «Հանդէս Ամսօրեայ» իբրեւ Հայագիտութեան հանդէս՝ պիտի բովանդակէ հայ գրականութեան, մատենագրութեան, բանասիրութեան, լեզուաբանութեան, հնախոսութեան, աշխարհագրութեան պատմութեան վերաբերեալ քննադատական ուսումնասիրութիւններ—ինքնս գիր և թարգմանածոյ: Չանց պիտի չառնուին հայ ականաւոր ու գրագէտ անձնաւորութեանց կենսագրութիւնները: Նոյնպէս քննադատական տեղեկութիւն պիտի տրուի ազգային կարեւոր լրերու, նոր հրատարակութեանց եւն.— Տարեկան բաժնեդինն է 10 ֆր. 4 բուրլ. կանխիկ: Խմբագրութեան հասցէն Ուլարասի Կոնստանտնուպոլիս Լազար Վիեննա (Սոդրի) է: 12 Միլիթարեանց 4

ՆՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ  
Կընդունուին նոր տարոյս սկիզբէն, դասերն են Ծրանսերէն, Հայերէն, Պուլիարիէն ու Անգլիերէն: Ամսականը 8—6 ֆրանք:

Ա. Ամիրխանեանց  
Печатница на П. Глушковъ С-ноВаряи